ՎՈՎԱ ԱՐԹՈՒՐԻ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի
Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի
3-րդ կուրսի ուսանող, ՈՒԳՍԸ նախագահ
E-mail: vovaarzumanyan200@gmail.com
Doi:10.58580/18290019-2023.2.65-4

Երաշխավորված է գիտական ղեկավար ԵԹԿՊԻ պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, գրող, կինոգետ Դավիթ Էդուարդի Մուրադյանի կողմից 16.09.2024

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 30.11.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 2.12.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.09.2023 թ.

ԽԱՉԱՏՐՅԱՆԱԿԱՆ ԿԻՆՈԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփում

Կինոն առանց երաժշտական ձևավորման թերևս վերջին տասնամյակներում պատկերացնել հնարավոր չէ: Եվ հաճախ երաժշտությունն է դառնում կարևոր տարր՝ հիշողության մեջ ամրագրելու ֆիլմի առանձին տեսարան-ները և ոչ միայն: Երաժշտության միջոցով են բովանդակային բնույթ ստանում ֆիլմերի մի մասը: Այս ամենը հաշվի առնելով անդրադարձել ենք Արամ Խաչատրյան կինոկոմոզիտորի ստեղծագործական աշխատանքներին՝ ընդգծելով դրանց գեղագիտական և կինեմատոգրաֆիական առանձնահատկությունները: Առանձին ստեղծագործությունների օրինակով փորձել ենք ամբողջացնել նրա կինոերաժշտական ժառանգության կարևորությունն ու արդիականությունը: Կինոյի պատմության համատեքստում դիտարկելով խաչատրյանական կինոերաժշտության բնույթը՝ փորձել ենք ըստ ֆիլմերի առանձնացնել դրանց տրամաբանական և բովանդակային փոխառնչությունները, որոնք նպաստում են ֆիլմերի գաղափարային լրացմանը: Մեր նպատակը նաև խաչատրյանական կինոերաժշտության պատմության ամբողջացումն է:

Բանալի բառեր: Կինոերաժշտություն, Արամ Խաչատրյան, ֆիլմ, մուլտֆիլմ, ռեժիսուրա, կադր, պատմահեղա-փոխական:

Abstract

3rd year student at the Faculty of Art History, Theory, and Management of Yerevan State Theatre and Film Institute, President of SSCC of YSTFI Vova Artur Arzumanyan. - “The features of Khachaturian's film music”.

In recent decades, it has been almost impossible to imagine cinema without musical accompaniment. Often, music becomes a key element in solidifying certain scenes from films in memory and not only. A significant number of films gain their content value through music. Taking all of this into account, we have explored Aram Khachaturian's creative works as a film composer, highlighting the aesthetic and cinematographic features of his works. Through the example of specific compositions, we have attempted to encapsulate the importance and relevance of his legacy in film music. By analyzing Khachaturian's film music within the context of film history, we have sought to distinguish its logical and content interconnections according to the films, which contribute to the ideological completion of the films. Our goal is also to provide a comprehensive view of the history of Khachaturian's film music.

Key words: film music, Aram Khachaturian, film, animation, directing, shot, historical-revolutionary.

Абстракт

Студент 3-го курса факультета истории искусств, теории и менеджмента Ереванского государственного института театра и кино (ЕГИТК), председатель СНТО ЕГИТК Вова Артурович Арзуманян. - “Особенности хачатуряновской киномузыки”.

В последние десятилетия, пожалуй, невозможно представить кино без музыкального оформления. И зачастую музыка становится важным элементом фиксации в памяти отдельных сцен фильма

только. Часть фильмов обогащает свое содержание через музыку. Учитывая все это, мы обратились к творчеству композитора Арама Хачатуряна, подчеркнув эстетические и кинематографические особенности его творчества. Мы постарались обобщить важность и актуальность его кино-музыкального нас-ледия на примере отдельных произведений. Рассматривая природу киномузыки Хачатуряна в контексте истории кино, мы попытались выделить их логические и содержательные взаимодействия, которые способствуют идейному дополнению фильмов. Наша цель также - обобщить историю киномузыки А. Хачатуряна.

Ключевые слова: музыка кино, Арам Хачатурян, фильм, мультфильм, режиссура, кадр, исторический революционный.

Կինոերաժշտությունը ծնվեց, որպեսզի
խլացնի պրոեկտորի աղմուկը...
և դա ճիշտ որոշում է՝ օգտագործել
ավելի հաճելի ձայնը՝ չեզոքացնելու
համար պակաս հաճելին:
Կինոգետ Կուրտ Լոնդոն

Կինոերաժշտությունը ֆիլմի կարևոր տարրերից է, որն ուժեղ էմոցիոնալ և հոգեբանական ազդեցություն է ունենում ունկընդրի վրա, տրամադրում է նախ դիտելու, ապա օգնում է ընկալել մոնտաժային նրբությունների և ֆիլմի դրամատուրգիայի ամբողջականությունը՝ ձևի և բովանդակության ներդաշնակությամբ: Համր կինոյից անցումը հընչյունային կինոյին, պահանջեց կինոյի կառուցման սկզբունքային փոփոխություն:

Կինոն, լինելով սինթետիկ արվեստի տեսակ, կարծես իր գոյությունն ապահովում է այլ ժամանակի և տարածության մեջ: Թերևս հենց ժամանակի և տարածության ուժի հաղթահարման մեջ է, թեկուզ երևակայական, բայցև կախարդական կողմը:

Նույնիսկ կինոյի արշալույսին երաժշտությունն ամուր կերպով ինտեգրված էր ֆիլմի դրամատուրգիային: Նախ՝ իմպրովիզների տեսքով՝ ուղեկցելով առաջին համր ֆիլմերի ցուցադրությանը, ապա՝ որպես արդեն հնչյունային ֆիլմերի մոնտաժի անբաժանելի բաղադրիչ:

Կինոերաժշտության ընկալման երկակիությունը, մի կողմից՝ ներկայացնելով կոմպոզիտորի անհատական ստեղծագործությունն ու մղումները, իսկ մյուս կողմից՝ լինելով վիզուալ շարքի ուղեկից ու մթնոլորտ վերստեղծող, անշուշտ ազդել է կինոերաժշտության տեսական ու գործնական ընկալման վրա:

Այս համատեքստում անդրադառնանք հայ ազգային կինոերաժշտության հիմնադիր Արամ Խաչատրյան կինոկոմպոզիտորի ձեռագրի առանձնահատկություններին:

Լինելով 25 կինոնկարի համար երաժշտական ստեղծագործությունների հեղինակ, կոմպոզիտորն ինքն էլ գիտակցում էր, որ կինոերաժշտությունը բարդ է այն առումով, որ դա ապագայում մեկ այլ արվեստի ճյուղի հետ է համակցվելու և պետք է մանրակրկիտ կերպով աշխատել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր նրբություն:

Առաջին փորձառությունը՝ 1935 թ. Համո Բեկնազարյանը «Հայֆիլմ» կինոստուդիայում Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի հիման վրա նկարահանված հայկական առաջին հնչուն՝ «Պեպո» ֆիլմի երաժշտությունն էր: Երիտասարդ կոմպոզիտորի ստեղծագործությունը, ինչպես նկատում է կինոգետ Սիրանույշ Գալստյանը, տեղ-տեղ ժողովրդական օպերա է հիշեցնում: Սա մեզ համար նույնպես փաստ է, որն արձանագրում ենք անգամ ֆիլմի առանձին տեսարանները քննության առնելիս: Ժողովրդական մեղեդու արժեքն ու նշանակությունը գիտակցելով՝ Արամ Խաչատրյանն օգտագործում է ժողովրդականը: Կոմպոզիտորի ու Եղիշե Չարենցի հանդիպումն էլ պատճառ է դառնում «Զկնորսի երգը», կամ ավելի տարածված՝ «Պեպոյի երգ» ստեղծագործությանը: Այն կարողացավ կայանալ նաև էկրանային իրականությունից դուրս՝ որպես ժողովրդականություն վայելող երգ (1.):

Արամ Խաչատրյան

Aram Khachaturian

Арам Хачатурян

Խաչատրյանի երաժշտությունը, պատկերի էվոլյուցիայի հետ զուգահեռաբար ընթանալով, ստեղծում է կինոնկարի իրականության տեսալսողական պատճեն, տրամադրություն, տեմպոռիթմ: Կոմպոզիտորը, թեմատիկ սահմաններում ընդգծելով այս ամենը, վարպետորեն ստեղծել է դրամատուրգիական նշանակություն ունեցող կինոձայն:

Կինոնկարի հիմք հանդիսացող գրական ստեղծագործությունն ինքնին հոսող նյութի աղբյուր է՝ առայսօր արդիական շեշտադրումներով: Կարծում ենք, «Պեպո» կինոնկարի ընդհանրապես գեղագիտական և զուտ կինեմատոգրաֆիկ արժեքի մասին երկար կարելի է խոսել՝ այդ համատեքստում ընդգծելով երաժշտության կարևորությունը:

Արդեն 1938-ին Համո Բեկնազարյանի և Յագ Դուկորիի նկարահանած «Զանգեզուր» պատմահեղափոխական ֆիլմում Խաչատրյանը սիմֆոնիկ կինոերաժշտությամբ է հանդես գալիս: Սյուժեի ընդհանուր դիմագծով դրամատիկ, զգացմունքային կետերը նկատի առնելով նախ պատկերային, ապա հնչյունային ռիթմով, պատկերաշարի էական հատկանիշներն այստեղ ընդգծվում են երաժշտությամբ: Խաչատրյանի երաժշտությունը թույլ է տալիս կինոդիտողի պատկերացման ներքին շարժումը ձևավորվի միակենտրոն: Հատկանշական է, որ այս կինոնկարի համար «Քայլերգի» երաժշտաստեղծման համար օգտագործված որոշ սկզբունքներ նա արտահայտել է իր ջութակի Կոնցերտի, «Սպարտակ» բալետի և այլ ֆիլմերի համար գրված երաժշտության մեջ:

Խաչատրյանը համագործակցել է նաև տաջկական կինոարտադրության հետ: Ն. Դոստալի «Պարտեզ», երկու տարի անց՝ ռուսական կինոյի համահիմնադիր համարվող Վ. Պրոտազանովի «Սալավաթ Յուլաև» պատմահեղափոխական կինոնկարի համար գրված երաժշտությունը դարձյալ հետաքրքիր լուծումներով ընդգծում է նշված ֆիլմերի հմայքն ու սյուժետային զարգացումը, կերպարների բնավորությունը, մթնոլորտը (2.):

Ռեժիսոր Միխայիլ Ռոմմի «Գաղտնի առաքելություն», «Ծովակալ Ուշակով» և «Նավերը գրոհում են բաստիոնները» կինոնկարների դեպքում Խաչատրյանի կինոերաժշտությունը գեղագիտական առանձնահատուկ որակ հաղորդեց, որի շնորհիվ ֆիլմերն ունեցան շարունակական հաջողություններ: «Գաղտնի առաքելության» մասերը՝ նախերգանք, Օդաչուն, Հանձնվել, Սպառազինություն՝ ֆինալային հատվածը, «Ծովակալ Ուշակովի» մեջ՝ Նախերգանք, Մենամարտ, Հուղարկավորություն, Ֆինալային հատվածը, կարծես ամբողջացնում են ֆիլմերի գեղարվեստական մեկնաբանությունը: Գուցեև այս ֆիլմերի լավագույն մեկնաբանը Խաչատրյանի մեղեդին է, և հաճախ ռեժիսուրան զիջում է զուտ երաժշտական դրամատուրգիական մոտեցումներին: Իսկ ահա օրինակ «Ռուսական հարց» կինոնկարի դեպքում ռեժիսորական մտահղացումն է երաժշտական լուծման մղել՝ գլխավոր հերոսի խոսքը փոխարինվել է երաժշտությամբ:

1949 թ. Խաչատրյանը մասնակցում է նաև Վլադիմիր Պետրովի «Ստալինգրադյան ճակատամարտը» կինոյի արտադրական աշխատանքներին: Այստեղ, իհարկե, ինչպես կոմպոզիտորն է խոստովանել՝ լիակատար ազատության մեջ չէր: Ստեղծագործական սահմանափակումներ կային՝ չպետք է լիներ քնարականություն, երգ, այլ՝ մեծ լարում, որը դիտողին նույնպես կպահեր լարման մեջ: Այն բաղկացած է ութ մասերից՝ «Քաղաքը Վոլգայի ափին», «Հարձակում», «Ստալինգրադը կրակների մեջ», «Թշնամին դատապարտված է», «Ճակատամարտ՝ հանուն Հայրենիքի», «Հավերժ փառք հերոսներին», «Առաջ դեպի հաղթանակ», «Վոլգայի քարափը»: Հատկանշական է, որ բացի կինոկենսագրությունից, այս ստեղծագործությունն սկսում է իր երաժշտական ճամփորդությունը որպես սիմֆոնիկ սյուիտ (3.):

Շատ ժամանակ չանցած, Սերգեյ Յուտկևիչի «Օթելլո» կինոնկարի համար գրված երաժշտությունը մի նոր էջ է բացում կինոկոմպոզիտորի համար: Այս կինոնկարի համար գրված ստեղծագործությունը բաղկացած է մի քանի մասերից. «Նախերգանքը՝ Օթելլոյի պատումը», «Զինվորի երգը», «Օթելլոյի մենախոսությունը», «Դեզդեմոնայի վոկալիզը» և «Ուռենու մասին երգը»: Այստեղ արդեն, Շեքսպիրյան դրամատուրգիայի թեմատիկան նկատի ունենալով, երաժշտական հյուսվածքն է առաջ մղում կինոնկարի ողբերգական դրամատիզմի զարգացումը:

Այսքանով չի սահմանափակվում Խաչատրյան կինոկոմպոզիտորի կենսագրությունը: Լավագույն ու հիշվող գործերից է նաև «Անմար կրակը» կինոնկարի համար գրված երաժշտությունը:

Խոսելով Խաչատրյանի կինոերաժշտության առանձնահատկությունների մասին, չենք կարող չհիշատակել 1975 թ. Հայֆիլմում նկարահանված «Շունն ու կատուն» մուլտֆիլմը, որի ռեժիսորն Արմեն Միրաքյանն է: Գայանե բալետի վերջին գործողության համար գրված «Սուսերով պարը» իր յուրատեսակ արտահայտչականությամբ նաև «Շունն ու կատուն» մուլտֆիլմում դրսևորվեց՝ այդպիսով փաստելով Խաչատրյանի երաժշտության կինոընդգրկման բացարձակությունը:

Այսպիսով, Խաչատրյանի կինոերաժշտության բնորոշ հատկանիշները կինոմշակույթի տարածքում մանրակրկիտ ուսումնասիրման ենթակա են, նաև նոր սերընդի կինոռեժիսորների և կինոկոմպոզիտորների համար հրաշալի օրինակ են՝ տեսնելու, թե ինչպես կինոյին կարելի է երաժշտությամբ հաղորդել գեղագիտական բարձր որակ և ինչպես կարող է երաժշտությունը ստեղծել կինոդիտողի հետ հաղորդակցման լավագույն միջավայր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://www.khachaturian.am/arm/works/kino.htm
2. https://kinoashkharh.am/2023/05/siland-kino-voice-film-beknazarov-xachturyan/
3. https://www.armmuseum.ru/news-blog/aram-khachaturian-movie-music

REFERENCES

1. http://www.khachaturian.am/arm/works/kino.htm
2. https://kinoashkharh.am/2023/05/siland-kino-voice-film-beknazarov-xachturyan/
3. https://www.armmuseum.ru/news-blog/aram-khachaturian-movie-music

Հեղինակի մասին.

ՎՈՎԱ ԱՐԹՈՒՐԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Ավարտել է՝ 2023-ին Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնը՝ որպես մանկավարժ, «Արևմտահայերենի» մասնագիտությամբ: Հայաստանի հանրային հեռուստաընկերության Մեդիա ակադեմիայի սցենարական բաժինը, 2023 թ. ԱՄՆ Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Կինոարվեստի դպրոցի պրոֆեսոր, ռեժիսոր և սցենարիստ Թեդ Բրաունի «Վավերագրական սթորիթելինգի» աշխատարան: 2023 թ. Էդ Հուկսի աշխատարանը՝ «Կերպարների խաղը անիմացիայում», «Դերասանական վարպետություն անիմատորների համար» թեմաներով, 2024 թթ. Հայկական PR ասոցացիայի «PR դպրոցում»: 2021-ից սովորում է ԵԹԿՊԻ Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի «Սցենարադրամատուրգիական արվեստ» բաժնում: Աշխատել է՝ 2019-2023 թթ. Արցախի հոգևոր, մշակութային և կրթագիտական «Վարդանանք» թերթի և «Գրական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր: 2019-2020 թթ. եղել է Հայաստանի հանրային ռադիոյի «Իմ ռադիո» երիտասարդական ալիքի Արցախի թղթակիցը: 2020-2023 թթ. «Առավոտ» օրաթերթի և համանուն կայքի կրթական և մշակութային բաժնի լրագրող: 2021-ից՝ «Եթեր» շաբաթաթերթի երիտասարդական էջի պատասխանատուն է: 2021-ից ԵԹԿՊԻ կառավարման խորհրդի անդամ է, 2024-ից՝ Խորհրդի քարտուղար: 2022-ից՝ ԵԹԿՊԻ ՈՒԳՍԸ նախագահն է: Մասնակցել է մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների: Հեղինակ է՝ գիտական հոդվածների և արժանացել են միջազգային մրցանակների: Արցախի և Հայաստանի գրողների միությունների, ԱՄՆ հայ գրողների և լրագրողների միության անդամ է: 2023 թ. «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում հաղթող է ճանաչվել: 2024 թ. մարտից Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագետ է: Հեղինակ է գրքերի՝ «Ճերմակ կարոտ»՝ 2019 թ., «Խաղաղությունն ու ես»՝ 2020 թ., «Բանակի տղան»՝ 2020 թ., «Հետդարձից առաջ»՝ 2021 թ., «Խզբզված թռիչք» (անգլ. լեզվով)՝ 2022 թ., «Ճաքած պատերի լուսանցքից»՝ 2022 թ., «Բառը շարժման մեջ. գրախոսականներ»՝ 2022 թ., «Ժամանակակից երիտասարդական ֆիլմերի դրամատուրգիական հիմքը»՝(մենագրություն)՝ 2023 թ., որպես ֆիլմերի սցենարների՝ «Տուն էր մտել» (կարճամետրաժ վավերագրական)՝ 2023 թ., Արցախի հանրային հեռուստատեսություն՝ որպես սցենարիստ: Որպես PR մասնագետ՝ «Եվ եկավ Հովհաննեսը»՝ (վավերագրական ֆիլմ, Հայաստան)՝ 2023 թ., «Ես բացեցի թևերս» (վավերագրական ֆիլմ, Հայաստան) 2023 թ.: Որպես խմբագիր՝ «Հայրիկ, դու ինձ սիրում ես, այդպես չէ» (կարճամետրաժ խաղարկային, Հայաստան)՝ 2024 թ., «Լռություն» (կարճամետրաժ խաղարկային, հետաարտադրական փուլ), որպես նաև ռեժիսորի ասիստենտ, «Արևի երկիր» (վավերագրական ֆիլմ, Հայաստան)՝ 2024 թ.:

About author: Vova Arthur Arzumanyan graduated from the Ludovika and Hakob Aintaplian Center for Western Armenian and Armenian Studies at Stepanakert Grigor Narekatsi University in 2023, receiving a qualification of a teacher specializing in Western Armenian. He also completed the scriptwriting course at the Media Academy of Armenian Public Television. In 2023, he received additional education at the "Documentary Storytelling" workshop led by professor, director, and screenwriter Ted Braun from the University of Southern California's School of Cinematic Arts. That same year, he attended Ed Hooks' workshop on "Acting for Animators" and "Character Performance in Animation". In 2023-2024, he studied at the "PR School" of Armenian PR Association. Since 2021, he has been studying at the dEpartment of "Screenwriting and Dramaturgical Art" at the Faculty of Art History, Theory, and Management of YSTFI. From 2019 to 2023, he was the Editor-in-Chief of the cultural, spiritual and educational-scientific periodicals "Vardananq" and "Literary Artsakh" of Artsakh. From 2019 to 2020, he was the Artsakh correspondent of the youth channel "My Radio" of the Public Radio of Armenia. From 2020 to 2023, he worked as a journalist for the education and culture section of the "Aravot" daily newspaper and website. Since 2021, he has been responsible for the youth section of the weekly newspaper "Yeter". Since 2021, he has been a member of the management board of YSTFI, and since 2024, the secretary of the board. Since 2022, he has been the president of the Student Scientific and Theoretical Society (SSTS) at YSTFI, and since 2023, he has served as the Head of PR Section. He has participated in various national and international conferences and has published articles in national and international scientific journals, with his scientific papers receiving international awards. He is member of the Writers' Unions of Artsakh and Armenia, the Union of Armenian Writers and Journalists of the USA, and the Armenian PR Association. In 2023, he was recognized as the winner of the "Best Student" national competition. Since March 2024, he has been an expert at the National Center for Professional Education Quality Assurance. He is author of several books, including "White Longing" (2019), "The Peace and Me" (2020), "The Army's Boy" (2020), "Before the Return (2021), "Scribbled Flight" (in English, 2022), "Through the Cracks of the Walls" (2022), "The Word in Motion: Reviews" (2022), and "The Dramaturgical Basis of Contemporary Youth Films" (monograph, 2023). As a scriptwriter, he wrote the script for the short documentary "Entered the House" (Artsakh Public Television, 2023). He also worked as a PR specialist for the documentary films "And Hovhannes Came" (Armenia, 2023) and "I Spread My Wings" (Armenia, 2023). As an editor, he contributed to the short feature film "Dad, You Love Me, Don't You?" (Armenia, 2024), and the short feature film "Silence", which is currently in post-production. Also, he was the assistant director for the documentary film "The Land of the Sun" (Armenia, 2024).

Об авторе: ВОВА АРТУРОВИЧ АРЗУМАНЯН. Окончил: научно-исследовательский центр западного армянства Лутовики и Якоба Айнтапляна Степанакертского университета имени Григора Нарекаци, преподаватель по специальности «Западноармянский язык» (2023); сценарный факультет Медиа-академии Общественного телевидения Армении. С 2021 года учится на отделении «Сценарно-драматическое искусство» факультета истории искус-ств, теории и менеджмента ЕГИТК. Работал: главный редак-тор арцахской духовно-культурной и просветительской газеты «Варданк» и журнала «Литературный Арцах» (2019-

2023); возглавлял молодежное объединение «Варданское поколение» Арцахской епархии ААН (2018-2020); арцахский корреспондент молодежного канала «Мое радио» Общественного радио Армении (2019-2020); журналист отдела образования и культуры ежедневной газеты «Аравот» и одноименного сайта (2020-2023); ответственный молодежной страницы еженедельника «Этер» (с 2021); член Правления (с 2021), секретарь Правления ЕГИТК (с 2024); президент СНТО (с 2022). Автор статей в республиканских и международных научных периодических изданиях (отмечены международными наградами). Член союзов писателей Арцаха и Армении, Американского союза армянских писателей и журналистов; победитель республиканского конкурса «Лучший студент» (2023); эксперт Национального центра обеспечения качества профессионального образования (с марта 2024). Автор книг: «Белая тос-ка» (2019); «Мир и я» (2020); «Армейский мальчик» (2020); «Перед возвращением» (2021); «Нацарапанный полет» (англ. языке) (2022); «От края треснутых стен» (2022); «Слово в движении: рецензии» (2022); монография «Драматургические основы современного молодежного кино» (2023). Сценарии фильмов: «Он во-шел в дом», короткометражный документальный фильм (2023); сценарист Общественного телевидения Арцаха. «И пришел Ованес», документальный фильм, Армения (2023), специалист по связям с общественностью. Документальный фильм «Я раскрыла крылья», Армения (2023), специалист по связям с общественностью. «Папа, ты меня любишь?», короткометражный фильм, Армения (2024), редактор. «Молчание», короткометражный фильм, постпродакшн, ассистент режиссера, монтажер документального фильма «Ареви Еркир», Армения (2024), монтаж.